

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

24 փետրվարի 2015 թ.

N 94-Ա

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ  
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1-Ն որոշման 17-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի ուսումնասիրության միջոցառումների 2015 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## Ծ Ր Ա Գ Ի Ր

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ

#### I. Ընդհանուր դրույթներ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կատարված վերջին տարիների երկրաբանագնահատողական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նախկինում կատարված երկրաբանահետախուզական աշխատանքները ավարտին չեն հասցվել և այժմ լրացուցիչ երկրաբանական ուսումնասիրություն են պահանջում: Այս առումով, 2015 թվականին սույն ծրագրով նախատեսվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի երկրաբանական ուսումնասիրության միջոցառումներ:

2. Երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար Ապագա սերունդների հիմնադրամին հասանելի են մասնագիտական ունակությունները, տեխնիկական հագեցվածությունը, ինչպես նաև այլ միջոցներ, որոնք նպատակաուղղված են ձեռնարկելու սույն ծրագրի շրջանակներում նախատեսվող բոլոր աշխատանքները:

#### II. Երկրաբանական ուսումնասիրության միջոցառումների նպատակը և խնդիրները

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի ուսումնասիրության միջոցառումների 2015 թվականի ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) նպատակաուղղված է՝

1) Խաչենի տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացմանը.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շինարարություններում սպիտակ մարմարացված կրաքարի (սպիտակ քարի) օգտագործման հնարավորության ուսումնասիրության աշխատանքների իրականացմանը.

3) մետամորֆացված կրաքարի հողմնահարման արգասիքների օգտագործման հնարավորության ուսումնասիրության և ճանապարհների փորձնական հատվածների շինարարության հաշվառման աշխատանքների իրականացմանը.

4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում երկրաբանավերաստուգաբանական աշխատանքների իրականացմանը.

5) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում երկրաքիմիական աշխատանքների իրականացմանը:

2. Ծրագրի հիմնական խնդիրն է հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լեռնահանքային արդյունաբերության համար հանքա-հումքային հենքի ստեղծումը:

### **III. Ծրագրային միջոցառումների իրականացումից ակնկալվող արդյունքները**

1. Ունենալ հաստատուն ու անընդհատ համալրվող հանրապետական երկրաբանական ֆոնդ և օգտակար հանածոների հանքավայրերի և հանքերակույմների կադաստր:

2. Գունավոր, ազնիվ և հազվագյուտ մետաղների հանքային կուտակումների, ոչ մետաղական օգտակար հանածոների հայտնաբերման և նրանց արդյունաբերական նշանակության որոշման միջոցով լեռնահանքային արդյունաբերության գործունեության համար ունենալ հանքա-հումքային հենք:

### **IV. Ծրագրի ֆինանսական ապահովումը և իրականացման սկզբունքը**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի ուսումնասիրության միջոցառումների ծրագրի ֆինանսավորման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեից կհատկացվի 150 000 000 (հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ, այդ թվում՝

1) Խաչենի հանքաերակման պղինձի ռեսուրսների գնահատում՝ 53 200 000 (հիսուներեք միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ.

2) սպիտակ քարի՝ մարմարացված կրաքարի շինարարության մեջ կիրառման հնարավորության գնահատում՝ 11 300 000 (տասնմեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ.

3) ճանապարհի՝ դաշտային, փորձարարական, անալիտիկ և կամերալ աշխատանքներ՝ 31 000 000 (երեսունմեկ միլիոն) ՀՀ դրամ.

4) երկրաբանական վերստուգիչ աշխատանքների իրականացում՝ 32 000 000 (երեսուներկու միլիոն) ՀՀ դրամ.

5) երկրաքիմիական որոնողական աշխատանքների իրականացում՝ 22 500 000 (քսաներկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**